Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հունիսի 5-ին Եղեգնաձորի շրջկենտրոնում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջան՝ նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին։

Նստաշրջանը բացեց ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Ս. Նալբանդյանը։ Նա ունկնդիրներին հանդամանորեն ծանոթացրեց գիտահետազոտական այն պրոբլեմներին և խնդիրներին, որոնց քննությամբ զբաղված է ինստիտուտի կոլեկտիվը։ Ապա Ա. Ղանալանյանը խոսեց ակադեմիկոս հայագետ Մ. Արեղյանի կյանքի և գիտական վաստակի մասին, որից հետո լսվեցին սեսիայի հիմնական զեկուցումները.

Առաջինը հանդես եկավ Ս. Ազաբաբյանը, նրա թեման էր «Թումանյանը և արդիականությունը», «Հայրենիքի կերպարը Թումանյանի ստեղծագործության մեջ» հարցի շուրջ զեկուցեց Էդ. Ջրբաշյանը։ Ա. Ինճիկյանի ելույթը նվիրված էր «Թումանյանը իբրև մարդ և ստեղծագործող» թեմային։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐԱԲԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Կոնֆերանսի հիմնական նպատակն էր հանրագումարի բերել այն գիտական հետազոտությունների արդյունքները, որ կատարել են արաբական երկրների պատմության, լեզվի, տնտեսագիտության և ուրիշ հարցերով զբաղվող գիտնականները։ Կոնֆերանսի նպատակն էր տարբեր սերնդի գիտնականներին հնարավորություն տալ մտքերի փոխանակության՝ հետազոտությունների և ապագա պլանների մասին։

Բոլոր նպատակները իրականացան։ Կոնֆերանսը առաջին նիստում լսեց երկու զեկուցում, որոնցում խոսվում էր երկրորդ կոնֆերանսից մինչև երրորդը ընկած ժամանակաշրջանում սովետական արաբագետների կատարած աշխատանքների մասին։ Զեկուցումներից մեկը՝ «Արաբերեն լեզվի և գրականության բնագավառում» կատարված ուսումնասիրությունների մասին կարդաց դոկտոր-պրոֆեսոր Գ. Շարբատովը, հետո «Պատմության և տնտեսագիտության բնագավառում կատարված ուսումնասիրությունների մասին» զեկուցումով հանդես եկավ տողերիս հեղինակը։ Երկու զեկուցողներն էլ նշեցին, որ սովետական արաբագիտությունը առաջընթացի կարևոր քայլ է կատարել և իր զարգացումը շարունակում է մեծ հաջողությամբ։ Սովետական գիտնականներն ունեն բոլոր անհրաժեշտ հնարավորությունները իրենց բեղմնավոր աշխատանքը շարունակելու և արաբագիտությունը մեր երկրում զարգացնելու համար։

Կոնֆերանսը բաժանվեց վեց սեկցիաների՝ պատմության, տնտեսագիտության, գրականության, լեզվի, սեմիտաբանության և գիտության պատմության ու օժանդակ դիսցիպլինների։ Նիստերում լսվեցին մոտ 80 զեկուցում և գիտական ինֆորմացիա։ Դժվար է խոսել բոլոր զեկուցումների հետաքրքրությունների մասին, ուստի կնշեմ միայն մի քանիսը։ Ուշագրավ էին Վ. Ի. Կիսելյովի «Արաբական երկրների նորագույն պատմության գիտական պարբերացման հարցի շուրջ», Ռ. Գ. Լանդայի «Մանրբուրժուազիայի քաղաքական դերը արաբական երկրներում» և հայ արաբագետ Ն. Հ. Հովհաննիսյանի «Արաբական քաղաքական տարբեր ուժերի վերաբերմունքը երկրորդ համաշխարհային պատերազմին» զեկուցումները։ Իսկ արաբագետներ Ն. Պ. Ռումանով (Մոսկվա) և Կ. Օ. Յունուսով (Լենինգրադ) խոսեցին ԱՄՀ-ում թատրոնի ստեղծման յուրահատկությունների և Թաֆիկ ալ-Հակիմի թատրոնի ռեալիզմի մասին։ Ի. Իբրահիմով (Դուշանբե) զեկուցեց Սաուդական Արաբիայում ժամանակակից բանաստեղծության զարգացման մասին։ Հայ փիլիսոփա Վ. Ջալոյանը հանդես եկավ «Արաբական փիլիսոփայության դերն ու նշանակությունը ընդհանուր փիլիսոփայության մեջ» թեմայով։

Կոնֆերանսի մասնակիցները միաձայն հատուկ որոշում ընդունեցին՝ մեղադրել ագրեսիվ իսրայելացիներին և ամերիկյան իմպերիալիստներին, որոնք օգնում են Իսրայելին և իրենց հավատարիմ աջակցությունը հայտնեցին արաբական ժողովուրդների արդար պայքարին։

Կոնֆերանսը որոշեց.

Հրատարակել բոլոր զեկուցումները, դրանց թվում նաև ելույթները։

Հաջորդ կոնֆերանսին, որը տեղի կունենա 1972 թ. Բաքվում, հրավիրել արաբական և սոցիալիստական երկրների գիտնականներին և յուրաքանչյուր երկու կոնֆերանսի միջև ընկած ժամանակամիջոցում տեղական սեսիաներ գումարել տարբեր հարցերի քննարկման նպատակով։

Ե. Ա. ԼԻԲԵԴԵՎ